ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-փետրվար)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 110.9%, 2022թ. հունվար-փետրվարին 2021թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 111.4%, իսկ 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 92.7%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-փետրվարին կազմել է 362 մլրդ 641.7 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2 մլրդ 636.6 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 67 մլրդ 445.9 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-փետրվարին կազմել է 37 մլրդ 625.2 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 4 մլրդ 889,8 մլն և 8 մլրդ 836,6 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-փետրվարին կազմել է 622 մլրդ 486.8 մլն դրամ, 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 132 մլրդ 987,9 մլն և 210 մլրդ 9,9 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-փետրվարին կազմել է 427 մլրդ 639.2 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջան ների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 111 մլրդ 341,5 մլն և 168 մլրդ 786,9 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 101%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.7%-ի և 92.1%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 113.2%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.9%-ի և 101%-ի պարագայում:

ԱԺԲԳ









Առևտրի շրջանառության իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 118%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույ ն ժամանակաշրջանների 108.2%-ի և 88.7%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 123.5%, 2022 և 2021 թվականների ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 120.1%-ի և 87.5%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-փետրվարին կազմել է 76 մլրդ 233.9 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 24.1 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 5.4 մլրդ դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-փետրվարին ին կազմել է 214 մլրդ 827.6 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 19.3 և 55.8 մլրդ դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-փետրվարին կազմել է 67 մլրդ 204.2 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1.97 և 7.9 մլրդ դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-փետրվարին կազմել է 4 մլրդ 376 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 508.5 մլն և 1 մլրդ 48.6 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 90.4%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.6%-ի և 103.1%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 106.6%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 116.7%-ի և 84.3%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմաբ կազմել է 100.1%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.8%-ի և 106.5%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 108.6%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.4%-ի և 100.3%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-փետրվարին կազմել է 40 մլրդ 858.1 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 529,8 և 209.5 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-փետրվարին կազմել է 90 մլրդ 992.2 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 30 և 42.8 մլրդ դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-փետրվարին կազմել է 118 մլրդ 914.1 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 39.9 և 43.5 մլրդ դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 98.4%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.3%-ի և 65.7%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 149%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 126.5% և 98.9%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-փետրվարին 2022թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 130.3%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.3%-ի և 98.9%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2023թ. փետրվարին 2022թ. փետրվարի նկատմամբ կազմել է 108.1%, 2022թ. փետրվարին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.8%, 2021թ. փետրվարին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.9%: ՍԳԻ-ն 2023թ.փետրվարին 2022թ.դեկտեմբերի նկատմամբ կազմել է 101.5%, 2022թ. փետրվարին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 101.7%, 2021թ. փետրվարին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 102.8%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2023թ. փետրվարի վերջի դրությամբ կազմել է 1 տրլ 51 մլրդ 224 մլն դրամ, ինչը 31 մլրդ 294 մլն դրամով կամ 2.9%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 297 մլրդ 130 մլն դրամով կամ 22%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2023թ. փետրվարի դրությամբ կազմել է 67651 մարդ, ինչը 16514 մարդով կամ 19.6%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 22218 մարդով կամ 24.7%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023թ. փետրվարի դրությամբ կազմել է 47841 մարդ, ինչը 9459 մարդով կամ 16.5%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 14767 մարդով կամ 23.6%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2023թ. հունվար-փետրվարին կազմել է 2 մլրդ 529.7 մլն. դոլար, ինչը 1 մլրդ 105.9 մլն դոլարով կամ 77.7%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 597.8 մլն. դոլարով 171.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2023թ. փետրվարին կազմել է -540.9 մլն դոլար, ինչը 130 մլն. դոլարով կամ 31.6%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 328.3 մլն դոլարով կամ 154.4%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2023թ. փետրվարին կազմել է 994.4 մլն դոլար, ինչը 488 մլն. դոլարով կամ 96.4%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 634.8 մլն դոլարով կամ 176.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2023թ. փետրվարին կազմել է 1 մլրդ 535,3 մլն դոլար, ինչը 618 մլն. դոլարով կամ 67.4%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 963 մլն. դոլարով կամ 168.3%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2023թ. հունվար-փետրվարին կազմել է 249696 դրամ, ինչը 44278 դրամով կամ 21.6%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 57660 դրամով կամ 30%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2023թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 54,544.8 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -11,270.9 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -43,273.9 մլն դրամ: 2022թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 40,720.6 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 391.3 և -43,273.9 մլն դրամ: 2021թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 18,722.8 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -359,729.5 և 341,006.7 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ